# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

«26» դեկտեմբեր 2019թ. No 3938 - Ա

## ՊԱԿԻՍՏԱՆԻ «ՀԵՐԲԻՈՆ ՊԱԿԻՍՏԱՆ ՊՎՏ. ՍՊԸ, ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՏՐԻԱՆԳԼ, ԿԱՀՈՒՏԱ ՌՈԱԴ, ՀՈՒՄԱԿ, ԻՍԼԱՄԱԲԱԴ» (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՀԵՐԲԻՈՆ ՊԱԿԻՍՏԱՆ ՊՎՏ. ՍՊԸ, ՊԼՈՏ 30, ՍԵԿՏՈՐ 28, ԿՈՐԱՆԳԻ ԻՆԴՈՒՍՏՐԱԼ ԱՐԵԱ, ԿԱՐԱՉԻ 74900, ՊԱԿԻՍՏԱՆ) ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ՆՈՎԵՔՍ ՑԵՏԻՐԻԶԻՆ, ՑԵՏԻՐԻԶԻՆ (ՑԵՏԻՐԻԶԻՆԻ ԴԻՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ) ԼՈՒԾՈՒՅԹ ՆԵՐՔԻՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 5 ՄԳ/5ՄԼ; 60ՄԼ ԱՊԱԿԵ ՇՇԻԿ ԵՎ ՉԱՓԻՉ ԳԴԱԼ» ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշումը, համաձայն «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 13.12.2019 թվականի N 0103166319, բացասական եզրակացությունները՝ «Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Ինդուստրիալ Տրիանգլ, Կահուտա Ռոադ, Հումակ, Իսլամաբադ (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հերբիոն Պակիստան Պվտ. Սպը, Պլոտ 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդուստրալ Արեա, Կարաչի 74900 Պակիստան), Դեղագործական Ընկերության Արտադրության «Նովեքս Ցետիրիզին, ցետիրիզին (ցետիրիզինի դիհիդրոքլորիդ) լուծույթ ներքին ընդունման 5 մգ/5մլ; 60մլ ապակե շշիկ և չափիչ գդալ» դեղի որակի, արդյունավետության և անվտանգության փորձաքննության արդյունքները, հիմք՝ փորձաքննության եզրակացություն N 18994 առ 13.12.2019թ., ղեկավարվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետի,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել «Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Ինդուստրիալ Տրիանգլ, Կահուտա Ռոադ, Հումակ, Իսլամաբադ (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հերբիոն Պակիստան Պվտ. Սպը, Պլոտ 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդուստրալ Արեա, Կարաչի 74900

Ստաց. 27.12.19 ժ. 12⁰⁰

Պակիստան), դեղագործական ընկերության արտադրության «Նովեքս Ցետիրիզին, ցետիրիզին (ցետիրիզինի դիհիդրոքլորիդ) լուծույթ ներքին ընդունման 5 մգ/5մլ; 60մլ ապակե 22իկ և չափիչ գդալ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ առաքել հայտատուին:

3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տրամադրումը հայտատուին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի հայտատուին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

26.12.2019

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360